27-ն Յուլիսի, Նոր Բայազէդու և Դարաչիչակի գործակալ Պետրոս Վարդապետի տարեոյս Յուլիսի 6-ին յայտարարութեամբ առաջարկուած Նոր Բայազէդու Հասարակութեան Համախոսականին համեմատ տեղւոյն երկսեռ դպրոցների համար հաստատուեցին Պ. Յարութիւն Մամիկոնեան՝ նախագահ Հոգաբարձութեան, պարոնայք Մատթէոս Ափրիկեանց, Հայրապետ Խաչատրեանց և Գէորգ Արծրունի՝ հոգաբարձու, իսկ Պ. Ստեփան Բատիկեան հոգաբարձու և տեսուչ։

—

27 Օգոստոսի Սինոդը ի նկատի ունելով որ Մայր Աթոռոյս ձեմարանում 171 որդեգիր աշակերտների պիտոյքը հաղիւ է հոգացվում նիւթական միջոցաց սղութեան պատճառով, որոշեց, քննութեամբ ընդունել միայն հոգևոր դպրանոցների դասընթացք աւարտող այն աշակերտներին՝ որոնք կարող կըլինին մտնել 6-րդ դասատուն և լսարանները. իսկ ստորին դասարաններից մինչև 5-րդ դասարանը դիշերօթիկ որդեգիր աշակերտ բնաւ չընդունել։

Հողակաթի վանուց վանահայր Մկրտիչ Վարդապետ Շահնազարեան անցեալ Օգոստոս ամսոյ 31-ին 45 տարեկան հասակում վախճանուեց և պատշաճաւոր յուղարկաւորութեամբ թաղուեց նոյն վանքի պարսպում եղած գերեզմանոցում։

Հանգուցեալը ուսել էր Մայր Աթոռոյս Հոգևոր Դպրանոցում և ստացել էր սարկաւագութիւն 1864 թուի Ապրիլի 25-ին, Աբեղայութիւն՝ 1865 թ. Մարտի 14-ին, իսկ մասնաւոր վարդապետութիւն 1878 թ. Մայիսի 16-ին։

Լուսաւորեսցէ Տէր հանգուցելոյ հոգին և մարդկօրէն սխալանացը ներումն շնորհելով՝ իւր Սուրբ տեսութեան արժանացնէ։